

**ԿԱՐԵՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,  
«ՖԼԵՇ» ՄՊԸ իրավաբան

**ԿՈՐՊՈՐԱՅԻԱՆ ՀՄԿՈՂ ԱՆՁԱՆՑ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սույն գիտական հոդվածով քննարկվող հարցերը արդիական են այն առումով, որ ՀՀ գործող օրենսդրությունը չի կարգավորում վերահսկող և վերահսկվող կորպորացիաների պատասխանատվության հարցերն ու առանձնահատկությունները:

Հոդվածի նպատակն է բացահայտել վերահսկող և վերահսկվող կորպորացիաների պատասխանատվության էությունն ու բովանդակությունը, կիրառման կարգը, պայմանները և այլ առանձնահատկությունները, ինչպես նաև վենչուրային բաժնետիրական ընկերություններում այդ հարցերի կարգավորման առանձնահատկությունները:

Ներկայացված առաջարկությունների ներդրման արդյունքում կհստակեցվեն վերահսկող և վերահսկվող կորպորացիաների պատասխանատվության հարցերը, դրանց վերաբերյալ կձևավորվի միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա:

**Հիմնարարներ** - վերահսկող կորպորացիա, վերահսկվող կորպորացիա, հիմնական ընկերություն, կախյալ և դուստր ընկերություններ, թափանցող պատասխանատվություն, կորպորատիվ շղարշի հաղթահարում, վենչուրային ներդրող, վենչուրային բաժնետիրական ընկերություն:

Կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում հարկ է անդրադառնալ հիմնական և դուստր ու կախյալ կորպորացիաների (կամ ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ՝ հսկող և հսկվող կորպորացիաների) պատասխանատվության բնութագրիչ գծերին ու հատկանիշներին:

Հիմնական և դուստր/կախյալ ընկերությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի<sup>2</sup> (այսուհետ՝ «ՔՕ») 75-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ տնտեսական ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:

Իսկ ՔՕ 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերակցությունը կամ ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը:

Միաժամանակ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի<sup>3</sup> (այսուհետ՝ «ԲԸ

օրենք») 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) ընկերություն կամ ընկերակցություն նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով հնարավորություն ունի կանխորոշել այդ ընկերության որոշումները:

Ընկերությունը մեկ այլ (հիմնական) ընկերության կամ ընկերակցության նկատմամբ համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերությունը կամ ընկերակցությունն ունի այդ ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը:

ՔՕ 75-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը, որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, դուստր ընկերության հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար և այդպիսի իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքը նախատեսված է դուստր ընկերության հետ կնքված պայմանագրում:

Մինչդեռ, ԲԸ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հիմնական ընկերությունը (ընկերակցությունը), որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, նրա հետ համա-

www.aradadutyjournal.com

պարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար, միաժամանակ այդպիսի իրավունք ունեցող է համարվում, եթե դա ամրագրված է նրանց միջև կնքված **պայմանագրում** կամ **ծագում է օրենքով չարգելված այլ ձևով**:

Վերոնշյալ իրավադրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դուստր ընկերությունների վերաբերյալ **ՔՕ** և **ԲԸ** օրենքների միջև կա որոշակի անհամապատասխանություն՝ կապված ընկերության որոշումները օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշելու հնարավորություն ընձեռելու և պարտադիր ցուցումներ տալու իրավունքի հետ: Մեր գնահատմամբ, հարկ է վերանայել **ՔՕ** կարգավորումը և այն համապատասխանեցնել **ԲԸ** օրենքին:

Իրավաբանական անձի՝ պարտատերերի վստահությունը չարաշահող մասնակիցները, օգտագործելով տնտեսական ընկերության տեսքով «կորպորատիվ վահանը», երբեմն փորձում են խուսափել հսկվող կորպորացիայի պարտավորություններով պահանջներից իրենց պատասխանատվության բացակայության հիմնավորմամբ՝ *sub colore juris* (թաքնվելով իրավունքով)<sup>4</sup>:

Հիմնական և դուստր ընկերությունների (կորպորատիվ հսկողության) հարաբերությունների հիմքում ընկած են 3 հատկանիշներ՝ 1. կանոնադրական կապիտալում գեռակշռող մասնակցություն, 2. պայմանագիր և/կամ 3. օրենքով չարգելված այլ ձև(եր): Կորպորատիվ հսկողությունը բնորոշվում է որպես կառավարչական որոշումներ, իրավաբանական անձի կառավարման կորպորատիվ ակտեր ընդունելու որոշակի իրավունքներ:

Հիմնական-դուստր հարաբերությունների առաջին չափանիշը հիմնական ընկերության՝ դուստր ընկերության **կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցություն** է, որը, սովորաբար կապվում է հսկիչ փաթեթի (ձայների 50%-ից ավելի) հետ:

**Ե. Ռուզակովան** գերակշռող մասնակցությունը բնորոշում է որպես մասնակցության չափ, որն արտահայտվում է ընկերության կանոնադրական կապիտալում ամենախոշոր տոկոսով և էականորեն գերազանցում է ցանկացած այլ բաժնետիրոջ/մասնակցի բաժնետոմսի/բաժնեմասի չափը, որի արդյունքում բաժնետիրոջ/մասնակցին հնարավորություն է տալիս ժողովի օրակարգի հարցերով քվեարկելու իր իրավունքն իրականացնելու միջոցով կանխորոշելու ժողովի կողմից իր կամքին համապատասխանող որոշումների ընդունումը:

Ըստ **Կ. Պորտնոյի**<sup>5</sup> գերակշռող մասնակցու-

թյունը կարող է արտահայտվել բաժնետոմսերի/բաժնեմասերի այնպիսի փաթեթի տիրապետմամբ, որը թեև համընդհանուր հասկացությամբ (50%-ից ավելի) չի համարվում հսկիչ, բայց բավարար է դուստր կամ կախյալ ընկերության որոշումների ընդունման վրա որոշիչ ազդեցություն ունենալու համար՝ կապված մնացած բաժնետոմսերի/բաժնեմասերի փաթեթների էական բաժանվածության հետ<sup>7</sup>:

Մինչդեռ **Գ. Լոմակինը** նշում է, որ գերակշռող մասնակցության հասկացությունը գնահատողական է և կախված չէ կանոնադրական կապիտալում մասնակցության հստակ որոշված չափից և առաջնայինը ոչ թե քանակական, այլ որակական չափանիշն է, որը հանգում է այլ տնտեսական ընկերության կողմից ընդունվող որոշումների կանխորոշման հնարավորությանը:

Կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, դրա առանձնահատկությունների հաշվառմամբ, պետք է գնահատել ինչպես քանակական, այնպես էլ որակական բնութագրիչները: Այլ խոսքով՝ հարկ է պարզել, թե ընկերությունը մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալում ինչ ծավալի (չափի) մասնակցություն ունի, ապա՝ այդ մասնակցության միջոցով ընկերությունը գործնականում կարող է և/կամ կոնկրետ դեպքում կանխորոշել է արդյոք մյուս ընկերության (դրա մարմինների) որոշումները:

Հիմնական - դուստր ընկերությունների փոխհարաբերությունների երկրորդ չափանիշը/հիմքը երկու ընկերությունների միջև կնքված **պայմանագիր** է: Այս համատեքստում հարց է առաջանում, թե դա պետք է լինի **ՔՕ-ով նախատեսված որևէ պայմանագիր, թե հատուկ պայմանագիր**:

Գիտության մեջ քննարկվող պայմանագրերի ներքո հասկացվում են հետևյալ պայմանագրերը՝

- 1) կառավարման պայմանագիր (միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները փոխանցելու մասին),
- 2) սովորական քաղաքացիաիրավական պայմանագիր,
- 3) կորպորատիվ պայմանագիր,
- 4) **ՔՕ-ով** չնախատեսված հատուկ պայմանագիր:

Կառավարման պայմանագրի առնչությամբ առկա են իրարից տարբերվող մոտեցումներ: **Ե. Մուխանովի** կարծիքով միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները փոխանցելու պայմանագիրը առաջացնում է հիմնական ընկերության կողմից դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք<sup>10</sup>, մինչդեռ ըստ Ս. Մոզիլսկի-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

ի՝ կառավարիչի և կառավարվող կազմակերպության հարաբերությունները չի կարելի դիտարկել որպես հիմնական և դուստր ընկերությունների հարաբերություններ<sup>11</sup> :

Ինչ վերաբերում է սովորական պայմանագրերով հիմնական-դուստր հարաբերությունների ծագմանը, ապա, ըստ որոշ հեղինակների, գրեթե յուրաքանչյուր քաղաքացիաիրավական պայմանագիր կարող է հիմք լինել հսկողության հարաբերությունների ծագման համար<sup>12</sup> :

**Ի. Շիտկինան** նշում է, որ այս կամ այն պայմանագիրը հողից գալիս հարաբերություններ առաջացնող պայմանագրերի թվին դասելը կախված է կոնկրետ պայմանագրի պայմաններից և յուրաքանչյուր պայմանագիր, որը թույլ է տալիս կողմերից մեկին կանխորոշելու մյուսի որոշումները, հողից գալիս հարաբերություններ առաջացնող է<sup>13</sup> :

Անդրադառնալով կորպորատիվ պայմանագրերին՝ հարկ է նկատել, որ հիմնական և դուստր ընկերությունների միջև հարաբերությունները կարելի է համարել կորպորատիվ հարաբերություններ, քանի որ դրանք կապված են դուստր ընկերությունում հիմնական ընկերության մասնակցության և կառավարման հետ:

Ըստ **Ա. Չախարովի**՝ կորպորատիվ պայմանագիրը աներկբայորեն կորպորատիվ հսկողության առաջացման հիմք է, սակայն այդ պայմանագրի՝ կորպորատիվ հսկողության հիմք լինելը կախված է կոնկրետ պայմանագրի պայմաններից (ընկերության կառավարման իրավունքներ և պարտականություններ)<sup>14</sup> :

Հատուկ պայմանագրի՝ որպես հիմնական-դուստր հարաբերությունների առաջացման հիմքի առնչությամբ ևս արտահայտվել են տարատեսակ մոտեցումներ:

**Օ. Լազարևի** դիրքորոշումն այն է, որ քննարկվող պայմանագիրը ՔՕ-ով չնախատեսված պայմանագիր է, որի առարկան դրա կողմերի՝ կառավարչական որոշումներ ընդունելու իրավունքը և դրանց ենթարկվելու պարտականություններն են, որպիսի պայմանագիրը կարող է լինել խառը՝ ներառելով այլ պայմանագրերի տարրեր<sup>15</sup> :

**Իսկ Ն. Կոզլովայի** պնդմամբ նշված պայմանագիրը ենթակայության պայմանագիր է, և հիմնական ու դուստր ընկերությունների միջև կորպորատիվ հարաբերությունները կարող են ծագել նրանց միջև ենթակայության պայմանագրի կնքման ուժով<sup>16</sup> :

**Ա. Չախարովի** տեսակետից կորպորատիվ պայմանագրի հիման վրա կորպորատիվ հսկողության ճանաչումը պետք է իրականացվի ոչ թե

ձևական հատկանիշով (եթե կա այդպիսի պայմանագիր, կա նաև հսկողություն և հակառակը), այլ բովանդակային՝ ելնելով կոնկրետ կորպորատիվ պայմանագրի պայմաններից, այն է՝ բավարար են արդյոք մեկի իրավունքները մյուսի որոշումները կանխորոշելու և հիմնական-դուստր հարաբերություններ որակելու համար:

Ըստ մեզ, յուրաքանչյուր պարագայում, անկախ կնքված պայմանագրի տեսակից և/կամ անվանումից (կորպորատիվ, խառը կամ այլ), հարկ է ուշադրություն դարձնել այդ պայմանագրի պայմաններին (իրավունքների և պարտականությունների համալիրին): Այլ կերպ ասած՝ եթե այդ պայմանների ուժով մեկ ընկերությունը գործնականում հնարավորություն ունի կանխորոշելու մյուսի որոշումները, ապա դա կարող է դիտվել հիմնական-դուստր հարաբերությունների առաջացման հիմք:

**Կորպորատիվ հսկողության այլ հիմքերի** թվին են դասվում դուստր ընկերության կանոնադրության մեջ հիմնական ընկերության ցուցումների պարտադիր լինելու ուղղակի ամրագրումը<sup>17</sup>, մեկ ընկերության կողմից մյուսի գլխավոր տնօրենին նշանակելը (կամ միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները իրականացնելը)<sup>18</sup>, դուստր ընկերության մենեջմենթի ծառայողական կախվածությունը հիմնական ընկերության մենեջմենթից<sup>19</sup>, մեկ ընկերության կողմից մյուսի բաժնետոմսերի հսկիչ փաթեթի հավատարմագրային կառավարիչ լինելը<sup>20</sup> և այլն:

Ինչ վերաբերում է կախյալ ընկերություններին, ապա մենք համաձայն ենք պրոֆեսոր Վ. Ավետիսյանի այն դիրքորոշմանը, որ պետք է հրաժարվել այդ ինստիտուտից<sup>21</sup>, նաև այն պատճառով, որ ոչ տեսականորեն, ոչ գործնականում այն որևէ խնդիր չի լուծում: Ավելին, ԲԸ օրենքի 7-րդ մասի կարգավորումները առավելապես ուղղված են դուստր ընկերությունների կանոնակարգմանը՝ թերկարգավորելով կախյալները:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ հիմնական (հսկող) և դուստր (հսկվող) կորպորացիաների պատասխանատվության պարտադիր բաղադրիչներն են՝

- 1) առնվազն 2 կորպորացիաների առկայությունը,
- 2) հսկող կորպորացիայի կողմից հսկվողի (կամ հսկվողների) որոշումները կանխորոշելու (ներառյալ՝ պարտադիր ցուցումներ տալու) իրավունքը/հնարավորությունը,
- 3) պատասխանատվությունը ծագում է հսկող կորպորացիայի ցուցումների համաձայն հսկվողի կնքած գործարքների կատարման, վնասներ պատ-

ճառելու, սնանկության, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Պրակտիկայում առանձնացվում են այնպիսի դոկտրինաներ, ինչպիսիք են «alter ego»-ն (երբ դուստր ընկերությունը ճանաչվում է հիմնական ընկերության մասը, «երկրորդ եսը») և «instrumentality»-ն (երբ հիմնական ընկերությունը օգտագործում է դուստր ընկերությունը որպես միջոց, «գործիք» իր նպատակների նվաճման համար՝ ի վնաս դուստրի շահերի):

Քննարկվող երկու դոկտրինաներում էլ ստուգվում են հետևյալ 2 թեստերը՝ **հսկողության կամ առանձնացվածության** (control/separateness) առկայության և **գործողությունների հակաօրինականության** (wrongful conduct), ինչպես նաև դրանց միջև պատճառահետևանքային կապի (վնասների մասով) ստուգում:

**Հսկողության գործոնի** շրջանակներում ստուգում են՝ արդյոք առկա է դուստր ընկերության առանձնացված գոյությունը և հիմնական ընկերության կողմից չափից ավելի հսկողություն նրա ամենօրյա գործողությունների և որոշումների վրա, ինչպես նաև հիմնական ընկերությունը ինչ աստիճանի հաշվի չի առնում դուստրի անկախությունը:

Համարվում է, որ կորպորատիվ շղարշը պետք է հանվի բոլոր այն դեպքերում, երբ հիմնական ընկերությունը իրականացնում է այն աստիճանի հսկողության, որը էականորեն գերազանցում է յուրաքանչյուր խոշոր բաժնետիրոջը ներհատուկ սովորական հսկողությունը: Ընդ որում՝ հսկողության ներքո հասկացվում է ոչ թե պարզապես դուստրի ֆինանսների (կապիտալի) նկատմամբ հսկողությունը, այլ դուստրի նկատմամբ ամբողջական գերիշխանությունը<sup>22</sup>:

Ավելին, **Ֆ. Պոուելի** կողմից առաջարկվել են նշված գործոնի 11 ենթագործոններ, որոնք հաստատում են մեկ կորպորացիայի՝ մյուսի նկատմամբ հսկողությունը<sup>23</sup>: Այս հարցի առնչությամբ քննարկվում է նաև կապիտալիզացիայի չափը, այսինքն՝ որքանով են ընկերության ռեսուրսները և կապիտալը բավարար համապատասխան գործունեությանը բնականոն զբաղվելու համար:

**Գործողությունների հակաիրավականության գործոնը** ենթադրում է, որ հիմնական ընկերությունը օգտագործում է դուստրի նկատմամբ իր ունեցած հսկողությունը հակաիրավական կամ անբարեխիղճ և անարդար գործողությունների կատարման համար՝ ի վնաս դուստրի կամ չարաշահում է իր իրավաբանական կամ փաստացի լիազորությունները: Գործողությունները համարվում են հակաիրավական, եթե դրանք ուղղված են ոչ պատշաճ

նպատակի (improper purpose) նվաճմանը:

Առանձնացվում են տվյալ գործոնի 7 ենթագործոններ՝

- 1) փաստացի խարդախություն (actual fraud),
- 2) հսկվող կորպորացիայի կանոնադրության խախտում,
- 3) հսկվող կորպորացիային իր ակտիվներից գրկելը,
- 4) մոլորեցնելը (misrepresentation),
- 5) էստոպել (հսկվող կորպորացիայի շահերը պաշտպանող հանգամանքներին հղում տալու իրավունքից գրկելը)
- 6) դելիկտ և
- 7) այլն<sup>24</sup>:

Ինչ վերաբերում է **պատճառահետևանքային կապի գործոնին**, նկատենք, որ այն ենթադրվում է, եթե պատասխանողը ուղղակիորեն չի վիճարկում պատճառական կապը կոնկրետ վեճի շրջանակներում:

Ուշադրության և քննարկման են արժանի նաև ամերիկյան իրավակարգին բնորոշ **միասնական առևտրային ձեռնարկության** (single business enterprise) և **գործակալության հարաբերությունների** (agency) դոկտրինաները:

**Միասնական առևտրային ձեռնարկության դոկտրինայի** համաձայն՝ կորպորացիաները կառավարվում են ոչ թե որպես առանձին անձինք, այլ միավորում են իրենց ռեսուրսները ընդհանուր գործարար նպատակի նվաճման համար: Յուրաքանչյուր այդպիսի կորպորացիա կարող է պատասխանատվության ենթարկվել այն պարտավորությունների համար, որոնք ծագել է այդպիսի գործարար նպատակի նվաճման հետ կապված:

Պրակտիկայում առանձնացվել են 18 գործոններ, որոնք հաշվի են առնվում կոնկրետ դեպքերում: Հետևապես, քննարկվող դոկտրինայի համար էականը միասնական գործարար նպատակի և ընկերությունների խմբի սկզբունքն է<sup>25</sup>:

Ըստ **գործակալության հարաբերությունների դոկտրինայի**՝ խնդրո առարկա կատեգորիայի գործերով սահմանվում է մի քանի առանձին գործող իրավաբանական անձանց առանձնացվածությունը, սպա կիրառվում են դոկտրինայի հնարքները մեկի պարտավորություններով մյուսին պատասխանատվության ենթարկելու համար:

Այս պարագայում հիմնական ընկերության պատասխանատվությունը վրա է հասնում, երբ այն դուստր ընկերության նկատմամբ իրականացնում է չափից ավելի հսկողություն: Նշված մոտեցումը կորպորատիվ շղարշի հաղթահարման դոկտրինայից տարբերվում է նրանով, որ չի պահանջվում հա-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

կախրավական գործողությունների չափանիշը: Գործակալության հարաբերությունների դոկտրինան այս առումով նույնական է կորպորատիվ շղարշի հաղթահարման դոկտրինային միայն հսկողության գործոնով<sup>26</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ անգլո-ամերիկյան և այլ իրավակարգերում հայտնի է «ներթափանցող պատասխանատվության» կառուցակարգը կամ «կորպորատիվ շղարշի հաղթահարման» դոկտրինան, որը ևս ենթակա է քննարկման:

«Կորպորատիվ շղարշի հաղթահարման» դոկտրինան գիտության մեջ համարվում է համալիր ինստիտուտ և բաժանվում է 2 մասի՝

1) «ներթափանցող պատասխանատվություն» և

2) կորպորացիայի հետ այն հսկող անձի «նույնացում»:

Նշված երկու հասկացությունները տարբերակվում են՝ կախված նրանից, թե հետևյալ երկու հիմնարար սկզբունքներից որն է ձևախեղվում. առանձնացման (նույնացման դեպքում) կամ սահմանափակ պատասխանատվության (ներթափանցող պատասխանատվության դեպքում) սկզբունքը<sup>27</sup>:

Նախևառաջ նշենք, որ կորպորատիվ իրավունքում, որպես ընդհանուր կանոն, ընկերությունը առանձնացված է նրա մասնակիցներից (գույքային առանձնացվածության կամ առանձնացման սկզբունք), իսկ իրավաբանական անձի շահերը հաճախ կարող են չհամընկնել դրա առանձին մասնակիցների շահերին (շահերի ինքնավարության սկզբունք):

Կորպորացիայի պարտատերերի առջև հսկող մասնակիցների պատասխանատվությունը համարվում է «արտաքին» կամ «ներթափանցող» պատասխանատվություն, այսինքն՝ կորպորացիայի պարտատերն իրավունք ունի պահանջել բավարարում անմիջականորեն հսկող բաժնետիրոջից (հաղթահարել կորպորատիվ շղարշը)<sup>28</sup>:

Ինչ վերաբերում է այլ իրավակարգերում քննարկվող պատասխանատվության պայմաններին (կիրառման առանձնահատկություններին), ապա հարկ է վկայակոչել դրանցից մի քանիսը:

Մասնավորապես, գերմանական իրավական պրակտիկայում ներթափանցող պատասխանատվության ենթարկելու համար հիմք են ընդունվում հետևյալ չափանիշները՝

- 1) գույքերը խառնելը,
- 2) գործունեության ոլորտները խառնելը,
- 3) նյութական/որակական թերկապիտալացումը (գույքի փաստացի անբավարարությունը),

4) իրավաբանական անձի ինստիտուտը չարաշահելը,

5) ոչնչացնող միջամտությունը (գործունեության մեջ ներխուժելը և բացասաբար ազդելը):

Ֆրանսիայում կիրառելի են հետևյալ խումբ պայմանները՝

- 1) ֆիկտիվ կորպորացիան,
- 2) գույքերը խառնելը,
- 3) դատական վերականգնարարական ընթացակարգը (սնանկության դեպքում ընկերության վճարունակության վերականգնման միջոց),
- 4) վարկունակության պատրանքը:

Նիդերլանդական կորպորատիվ իրավունքում առանձնացված են նշված չափանիշները՝

- 1) թերկապիտալացումը,
- 2) ակտիվները տեղափոխելը,
- 3) գերակշռությունը,
- 4) գույքերը խառնելը,
- 5) վարկունակության պատրանքը:

Խնդրո առարկա պատասխանատվության առնչությամբ ԱՄՆ-ում կիրառվում են հաջորդիվ նշված պայմանները՝

- 1) մոլորեցնելը,
- 2) կորպորատիվ ընթացակարգերը չպահպանելը,
- 3) գույքերը խառնելը,
- 4) գործունեության ոլորտները խառնելը,
- 5) թերկապիտալացումը,
- 6) գերակշռությունը,
- 7) անարդարությունը<sup>29</sup>:

Հարկ է արձանագրել, որ կորպորացիայի պարտատերերի և այն հսկող մասնակիցների միջև ռիսկի բաշխման անհավասարակշռությունը պետք է ունենա վերականգնման պոտենցիալ «ներթափանցող պատասխանատվության» միջոցով, որը կիրառվում է միայն որպես ultima ratio (ծայրահեղ միջոց)<sup>30</sup>:

«Կորպորատիվ շղարշի հաղթահարումը» չի պարունակում վտանգներ իրավաբանական անձի կառուցակարգի համար, եթե այն կիրառվում է ողջամտորեն և միայն որպես վերջնական միջոց: Ուստի, այն կարող է հավասարակշռված և հնարավորինս կանոնակարգված ձևով կիրառվել նաև ՀՀ կորպորատիվ իրավական համակարգում:

Ի վերջո, բաժնետիրական ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հավելյալ գույքային միջոցներ (շահութաբաժիններ) ստանալու մտադրությամբ միավորված անձանց կազմակերպություն ունի ոչ միայն առանձին բաժնետերերի մասնավոր շահերի հավասարակշռման, այլև ընդհանուր կորպորատիվ շահերի

www.aradadutyjournal.com

ապահովման խնդիր: Հակառակ դեպքում ընկերության կառավարումը կդառնա անարդյունավետ, իսկ դա հետագա անդրադարձ կունենա հենց նույն բաժնետերերի սեփականության իրավունքի իրականացման արդյունավետության վրա<sup>1</sup>:

Կարծում ենք, որ կորպորատիվ շղարշի հաղթահարման վերաբերյալ արտասահմանյան իրավակարգերում գործող պայմանները (չափանիշները) կարող են mutatis mutandis տեղայնացվել և օգտագործվել, ինչը հնարավորություն կտա կանխելու պատասխանատվության այս տեսակի վերաբերյալ կամայական մոտեցումները և կձևավորվի միասնական ու կանխատեսելի պրակտիկա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ հսկող (հիմնական) և հսկվող (դուստր, կախյալ) կորպորացիաների և կորպորացիան հսկող անձանց պատասխանատվության հարցերը ՀՀ-ում թեև մասամբ կարգավորված են, սակայն բացակայում են դրանց կիրառման ուղենիշային չափանիշներն ու պրակտիկան, որպիսի բացը կարող է լրացվել վկայակոչված արտասահմանյան փորձի ներդրմամբ:

Մյուս կողմից, քննարկվող համատեքստում անդրադառնալով հսկող և հսկվող վենչուրային բաժնետիրական ընկերություններին (այսուհետ՝ «ՎԲԸ»)<sup>2</sup> հարկ ենք համարում ընդգծել, որ ՎԲԸ-ների դեպքում ևս կարող է ի հայտ գալ վենչուրային ներդրողների հսկողության հարցը:

Մասնավորապես, ՎԲԸ-ի բաժնետեր վենչուրային ներդրողները ներդրման համաձայնագրի (մաս՝ կանոնադրության, բաժնետիրական համա-

ձայնագրի, կորպորացիայի ներքին այլ փաստաթղթերի և այլն) հիման վրա ձեռք բերված հատուկ իրավունքների, արտոնությունների և առավելությունների ուժով կարող են վերածվել հսկող կորպորացիայի և/կամ կորպորացիան հսկող անձի և նրանց նկատմամբ mutatis mutandis կկիրառվեն վերը հիշատակված կանոնները:

Հետևապես, առաջարկում ենք նախատեսել, որ ՎԲԸ-ների բաժնետեր վենչուրային ներդրողները իրենց վերապահված հատուկ իրավունքների, արտոնությունների և/կամ առավելությունների ուժով կարող են դառնալ հսկող կորպորացիա և/կամ կորպորացիան հսկող անձ (որպես հսկողության հարաբերությունների առաջացման ինքնուրույն հիմք):

Միաժամանակ, նկատենք, որ ՎԲԸ-ներին բնութագրական տնտեսական և/կամ հսկողական բաղադրիչները հնարավորություն են տալիս սահմանափակելու վենչուրային ներդրողների պատասխանատվությունը կամ ազատելու դրանից, ինչը կարելի է դիտարկել որպես ՎԲԸ-ների առանձնահատկություն:

Ուստի, վերոգրյալի հաշվառմամբ, առաջարկում ենք նախատեսել՝ «կորպորատիվ շղարշի հաղթահարման» ղոկտրինան ՎԲԸ-ների մասով կիրառվում է այնքանով, որքանով դա չի հակասում ՎԲԸ օրենսդրության՝ վենչուրային ներդրողների պատասխանատվությունը կանոնակարգող դրույթներին:

<sup>1</sup> Տե՛ս, Ավետիսյան Վ. Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը հայաստանի հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 98-99:  
<sup>2</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված՝ 05.05.1998թ., Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/18(51)  
<sup>3</sup> «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, Ընդունված՝ 25.09.2001թ., Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831:  
<sup>4</sup> Տե՛ս, Быканов Д. Д., «Проникающая ответственность» в зарубежном и российском корпоративном праве, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2018, С. 7.  
<sup>5</sup> Մանրամասն տե՛ս Տարբախ Ս.Վ., Восстановление корпоративного контроля. Вестник гражданского права. 2008, N4:  
<sup>6</sup> Տե՛ս, Рузакова Е.В., Предпринимательские многосубъектные образования: правовая модель и действительность // Правовое положение субъектов предпринимательской деятельности. Под ред. В.С. Бельих. Екатеринбург, 2002, С. 220.  
<sup>7</sup> Տե՛ս, Портной К.Я., Правовое положение холдингов в России: Научно-практическое пособие. М., 2004, С. 21.  
<sup>8</sup> Տե՛ս, Ломакин Д.В., Общие положения об органах акционерного общества // Очерки теории акционерного права и практики применения акционерного законодательства. - М., 2005, С. 71.  
<sup>9</sup> Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 118-119:  
<sup>10</sup> Տե՛ս, Научно-практический комментарий к части первой Гражданского кодекса Российской Федерации для предпринимателей/Под ред. В.Д. Карповича. М., 1999, С. 194.  
<sup>11</sup> Տե՛ս, Могилевский С.Д., Общество с ограниченной ответственностью: законодательство и практика его

www.aradaradutyjournal.com



применения. М., 2010. Цит. по СПС Консультант+, С. 178.

<sup>12</sup> Տե՛ս, Звездина Т.М., Правовое положение дочернего и зависимого хозяйственных обществ // Правовое положение субъектов предпринимательской деятельности / Под ред. В.С. Белых. Екатеринбург, 2002, С. 96.

<sup>13</sup> Տե՛ս, Шиткина И.С., Основания установления холдинговых отношений //Предпринимательское право, 2005, N2, С. 6 (цитата по СПС Консультант+).

<sup>14</sup> Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 125:

<sup>15</sup> Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 125, Лазарев О.А., Консультация по конкретному вопросу. СПС Консультант+.

<sup>16</sup> Տե՛ս, Козлова Н.В., Понятие и сущность юридического лица. М., 2003, С. 115.

<sup>17</sup> Տե՛ս, Ломакин Д.В., Корпоративные правоотношения: общая теория и практика ее применения в хозяйственных обществах. М., 2008, С. 30 (цит. по СПС Консультант+), Кавелина Н. Ю., Ответственность основного общества при несостоятельности дочернего акционерного общества //Законы России: опыт, анализ, практика», 2007, N7, С. 2 (по СПС Консультант+).

<sup>18</sup> Տե՛ս, Постановление ФЛС Уральского округа от 9 июля 2008 г. N Ф09-4806/08-С4 по делу N А47-7988/2006-33гк.

<sup>19</sup> Տե՛ս, Постановление ФАС Северо-Западного округа от 15 мая 2002 года по делу N А56-17968/01.

<sup>20</sup> Տե՛ս, Молотников А.Е., Ответственность в акционерных обществах. М., 2006, С. 71.

<sup>21</sup> Տե՛ս, Ավետիսյան Վ. Դ., նշվ. աշխ., էջ 94:

<sup>22</sup> Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 159-160, 162-168:

<sup>23</sup> Տե՛ս, Powell F.J., Parent and Subsidiary Corporations. 1931, էջ 54:

<sup>24</sup> Տե՛ս, Powell F.J., նշվ. աշխ., էջ 54:

<sup>25</sup> Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 173-174, 179-185:

<sup>26</sup> Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 185-187, տե՛ս նաև Forrester C? M., Shearman & Sterling LLP, Ferber C. S., Fiduciary Duties and Other Responsibilities of Corporate Directors and Officers, Sixth Edition, 2016, էջ 137-144:

<sup>27</sup> Տե՛ս, Быканов Д. Д., նշվ. աշխ., էջ 32, 45-48:

<sup>28</sup> Տե՛ս, Быканов Д. Д., նշվ. աշխ., էջ 18, 26:

<sup>29</sup> Տե՛ս, Быканов Д. Д., նշվ. աշխ., էջ 128-141, 143-147:

<sup>30</sup> Տե՛ս, Быканов Д. Д., նշվ. աշխ., էջ 83:

<sup>31</sup> Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 13.07.2010թ. թիվ ՍԳ-Ո-903 որոշումը/:

<sup>32</sup> Meliksetyan K., The concept, characteristics of corporate-type legal entities (corporations) and description of governing bodies, Պետություն և իրավունք, N 3 (94) 2022 (<https://journals.yasu.am/index.php/state-and-law/article/view/8498/7982>) (վերջին մուտք՝ 202032023թ.):

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

1. Ավետիսյան Վ. Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը հայաստանի հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված՝ 05.05.1998թ., Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/18(51)

3. Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենք, Ընդունված՝ 25.09.2001թ., Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831

4. Быканов Д. Д., «Проникающая ответственность» в зарубежном и российском корпоративном праве, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2018.

5. Сарбаш С.В., Восстановление корпоративного контроля. Вестник гражданского права. 2008, N4.

6. Рузакова Е.В., Предпринимательские многосубъектные образования: правовая модель и действительность // Правовое положение субъектов предпринимательской деятельности. Под ред. В.С. Белых. Екатеринбург, 2002.

7. Портной К.Я., Правовое положение холдингов в России: Научно-практическое пособие. М, 2004.

8. Ломакин Д.В., Общие положения об органах акционерного общества // Очерки теории акционерного права и практики применения акционерного законодательства. - М., 2005.

9. Захаров А. Н., նշվ. աշխ.

10. Научно-практический комментарий к части первой Гражданского кодекса Российской Федерации для предпринимателей/Под ред. В.Д. Карповича. М., 1999.

11. Могилевский С.Д., Общество с ограниченной ответственностью: законодательство и практика его применения. М., 2010, (цитата по СПС Консультант+).

12. Звездина Т.М., Правовое положение дочернего и зависимого хозяйственных обществ // Правовое положение субъектов предпринимательской деятельности / Под ред. В.С. Белых. Екатеринбург, 2002.

13. Шиткина И.С., Основания установления холдинговых отношений //Предпринимательское право, 2005, N2, (цитата по СПС Консультант+).

14. Захаров А. Н., նշվ. աշխ.

15. Захаров А. Н., նշվ. աշխ., Лазарев О.А., Консультация по конкретному вопросу. СПС Консультант+.

16. Козлова Н.В., Понятие и сущность юридического лица. М., 2003.

17. Ломакин Д.В., Корпоративные правоотношения: общая теория и практика ее применения в хозяйственных обществах. М., 2008, (цит. по СПС Консультант+), Кавелина Н.Ю., Ответственность основного общества при

несостоятельности дочернего акционерного общества //Законы России: опыт, анализ, практика», 2007, N7, (по СПС Консультант+).

18. Постановление ФЛС Уральского округа от 9 июля 2008 г. N Ф09-4806/08-С4 по делу N А47-7988/2006-33гк.

19. Постановление ФАС Северо-Западного округа от 15 мая 2002 года по делу N А56-17968/01.

20. Молотников А.Е., Ответственность в акционерных обществах. М., 2006.

21. Ավետիսյան Վ. Գ., նշվ. աշխ.

22. Захаров А. Н., նշվ. աշխ.

23. Powell F.J., Parent and Subsidiary Corporations. 1931.

24. Powell F.J., նշվ. աշխ.

25. Захаров А. Н., նշվ. աշխ.

26. Захаров А. Н., նշվ. աշխ., տե՛ս նաև Forrester C. M., Shearman & Sterling LLP, Ferber C. S., Fiduciary Duties and Other Responsibilities of Corporate Directors and Officers, Sixth Edition, 2016.

27. Быканов Д. Д., նշվ. աշխ.

28. ՀՀ սահմանադրական դատարանի 13.07.2010թ. թիվ ՍԳ-Ո-903 որոշումը.

29. Meliksetyan K., The concept, characteristics of corporate-type legal entities (corporations) and description of governing bodies, Պետություն և իրավունք, N 3 (94) 2022 (<https://journals.yso.am/index.php/state-and-law/article/view/8498/7982>) (վերջին մուտք՝ 20.03.2023թ.):

**Карен Меликсетян**  
Аспирант кафедры гражданского права ЕГУ,  
юрист ООО “ФЛЕШ”

РЕЗЮМЕ

*Особенности ответственности лиц, контролирующих корпорацию*

Вопросы, обсуждаемые в данной научной статье, актуальны в том смысле, что действующим законодательством РА не урегулированы вопросы и особенности ответственности контролирующих и контролируемых корпораций.

Цель статьи-выявить сущность и содержание ответственности контролирующих и контролируемых корпораций, порядок применения, условия и другие особенности, а также особенности регулирования этих вопросов в венчурных акционерных обществах.

В результате внедрения представленных предложений будут уточнены вопросы ответственности контролирующих и контролируемых корпораций, по ним будет сформирована единая и предсказуемая судебная практика.

**Ключевые слова:** *контролирующая корпорация, контролируемая корпорация, основная компания, зависимые и дочерние компании, проникающая ответственность, преодоление корпоративной завесы, венчурный инвестор, венчурное акционерное общество.*

**Karen Meliksetyan**  
PhD student of the Department of Civil Law of YSU,  
Lawyer of “FLASH” LLC

SUMMARY

*Features of liability of persons controlling the corporation*

The issues discussed in this scientific article are relevant in the sense that the current legislation of the Republic of Armenia does not regulate the issues and features of the liability of controlling and controlled corporations.

The purpose of the article is to identify the essence and content of the liability of controlling and controlled corporations, the procedure for application, conditions and other features, as well as the specifics of regulating these issues in venture joint-stock companies.

As a result of the implementation of the submitted proposals, the issues of liability of controlling and controlled corporations will be clarified, a unified and predictable judicial practice will be formed on them.

**Key words:** *controlling corporation, controlled corporation, parent company, dependent and subsidiary companies, penetrating liability, piercing the corporate veil, venture investor; venture joint stock company.*

Բնագիրը ներկայացվել է 24.03.2023թ.  
Ընդունվել է տպագրության 21.09.2023թ.  
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) ԵՊՀ  
քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,  
իրավաբանական գիտությունների դոկտոր Վ. Ավետիսյանը